

---

ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ  
ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ «ՓՈՐՁ» ԵՎ «ԱՐՁԱԳԱՆՔ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ

ՀՐԱՉՅԱ ԱՍՄԱՐՅԱՆ

1815 թ. Վիեննայի կոնգրեսից հետո Իտալիան մասնատվեց և տրոհվեց մանր պետությունների:

1831 թ. Մարսելում Ջուզեպե Մաձինին (1805–1872)՝ իտալական ազգային-ազատագրական շարժման ղեկավարներից մեկը, հիմնադրեց նոր կազմակերպություն, որն ստացավ «Երիտասարդ Իտալիա» անունը: Այն առաջադրեց երկրի միասնության ու ազգային անկախության ծրագիրը, հանրապետության հաստատման պահանջները, ինչպես նաև Իտալիայի պատմության մեջ առաջին անգամ քարոզեց երկրի միավորման և անկախության խնդիրը: Նույնատիպ կազմակերպություններ հիմնվեցին Եվրոպայի մի շարք այլ երկրներում: Ջ. Մաձինին ձգտում էր համակերպական հեղափոխության: 1834 թ. նա դարձավ նաև «Երիտասարդ Եվրոպա» կազմակերպության հիմնադիրը:

«Երիտասարդ Իտալիան» և «Երիտասարդ Եվրոպան» դեմոկրատական կազմակերպություններ էին, որոնք իրենց ազդեցությունն են ունեցել եվրոպական երկրների հեղափոխական շարժման, ինչպես նաև «Մանուկ Հայաստան» կազմակերպության վրա<sup>1</sup>: Վերջինս գործում էր ցարական Ռուսաստանում՝ Սանկտ-Պետերբուրգում և Մոսկվայում, իսկ կազմակերպության վերջին շրջանի գործունեությունը կապված էր Թիֆլիսի հայ մտավորականության հետ:

1848–1849 թթ. եվրոպական հեղափոխություններից և մասնավորապես իտալական ազատագրական շարժումից հետո էլ չլուծվեց Իտալիայի վերամիավորման հարցը, քանի որ այդ շարժումը միատարր չէր: Պատմական այդ մեծ առաքելությունը վիճակված էր 1859–1860 թթ. իտալական հեղափոխությանը:

XIX դ. կեսին իտալական ազգային-ազատագրական շարժման չափավոր լիբերալ ուղղության ղեկավարն էր Պիեմոնտի վարչապետ կոմս Կամիլո Բենզո Կավուրը (1810–1861), իսկ վերջինիս մահից հետո՝ 1861 թ., միասնական Իտալիայի թագավոր Վիկտոր-Էմանուել Երկրորդը (1820–1878): Ազգային հեղափոխության ղեկավարներն էին Ջուզեպե Մաձինին, Ջուզեպե Գարիբալդին (1807–1882), Գարլո Կատանեոն (1801–1869) և ուրիշները: Իտալական հեղափոխությունը Մաձինիի, Գարիբալդիի և կոմս Կավուրի գլխավորությամբ երկրի

---

<sup>1</sup> Տե՛ս Հ. ր. Ա ս մ ր յ ա ն. Լեոյի «Մանուկ Հայաստան» (Մի գլուխ հայ հասարակական մտքի զարգացման պատմությունից), 1932 թ. աշխատությունը.– «Բանբեր Հայաստանի արխիվներին», 1990, № 3, էջ 13–67, 1991, № 3, էջ 4–41:

միավորումը հասցրեց ավարտին (1870 թ. սեպտեմբերի 20-ին), այնուամենայնիվ, Իտալիայում հաստատվեց սահմանադրական միապետություն, ուր երկրի ամբողջ իշխանությունը կենտրոնացվել էր Վիկտոր-Էմանուել Երկրորդ թագավորի ձեռքում:

Ռիտրոջիմենտոյի (Վերածնության) ժամանակաշրջանի իտալական պետության կազմավորման հերոսական պատմությունն իր արտացոլումն էր գտել Թիֆլիսում տպագրվող «Փորձ» և «Արձագանք» պարբերականներում՝ ներկայացնելով ժամանակաշրջանի իտալական ազգային խոշոր անհատներին, ովքեր որոշակի դեր են խաղացել Իտալիայի պատմության կերտման գործում: Հայ պարբերականների ուշադրությունը բնեռվում էր իտալական ազգային-ազատագրական շարժման գործիչներից Ջուզեպե Մաձինիի, Ջուզեպե Գարիբալդիի, Վիկտոր-Էմանուել Երկրորդի և ուրիշների<sup>2</sup> հայրենասիրական ու քաղաքական գործունեության վրա:

Հայ լրագրության պատմության մեջ ի՞նչ դեր ունեին Աբգար Հովհաննիսյանի հրատարակած «Փորձ» և «Արձագանք» պարբերականները<sup>3</sup>, ուր քննարկվում էին հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին վերաբերող խնդիրներ, ինչպես նաև թատրոնի, գրականության, դպրոցական ցանցի զարգացման հարցեր, որոնք նպաստում էին մշակույթի առաջընթացին և ժողովրդի լուսավորությանը: Ա. Հովհաննիսյանը սերտորեն համագործակցում էր ժամանակի անվանի մտավորականներ Կարապետ Եզյանի, Փիլիպոս Վարդանյանի, Պետրոս Միմոնյանի, Ռուբեն Հասան-Ջալալյանի և այլոց հետ: Մեծ տեղ էր տրվում նաև Եվրոպայի փոքր ժողովուրդների մղած ազգային-ազատագրական պայքարի խնդիրներին: Հետաքրքրական է 1876 թ. «Փորձում» տպագրված տեսաբաններից մեկի՝ Ստ. Պալասանյանի «19-րդ դարու նշանաբանը» ուսումնասիրությունը, որտեղ հեղինակը ցույց էր տալիս, որ XIX դ. ազգության ոգին արթնանում էր ժողովուրդների մեջ, և նրանք կազմավորում են անկախ պետություններ՝ Հունաստանում, Հունգարիայում, տեղի

<sup>2</sup> Հիշյալ պարբերականներում թեև կոմս Կավուրին նվիրված առանձին հոդվածներ չկան, սակայն կան նրա մասին դիպուկ արտահայտություններ, որոնցից զգացվում էր հեղինակների բարձր գնահատականները իտալացի գործչի վերաբերյալ:

<sup>3</sup> Հայ հասարակական նշանավոր գործիչ, հրապարակախոս և թարգմանիչ Աբգար Հարությունի Հովհաննիսյանը ծնվել է Թիֆլիսում 1849 թ.: Նա հիմնավոր կրթություն է ստացել Սանկտ Պետերբուրգի, այսպես լայնորեն (Գերմանիա) համալսարաններում, ուր ուսումնասիրել է տնտեսագիտություն և ֆինանսներ: Արտասահմանում փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան ստանալով՝ 1872-ին վերադառնում է Թիֆլիս և աշխատում բանկի կառավարիչ: Այդ ընթացքում իր միջոցներով տպագրում է Ըաֆֆու, Դ. Աղայանի, Ստ. Պալասանյանի գրքերը, ինչպես նաև Շիլլերի «Վիլհելմ Տեյլը»: 1879-1880 թթ. Թիֆլիսի հայկական թատրոնի դիրեկտորն էր, որտեղ Պոլսից և այլ վայրերից դերասաններ էր հրավիրում նոր դերեր խաղալու: Թատրոնի խաղացանկը հարստացնելու համար թարգմանում է մի քանի պիեսներ գերմաներենից և ֆրանսերենից: Այդ ժամանակ էլ նա դառնում է «Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակության ընկերության» ղեկավարը: 1876-ին Թիֆլիսում հիմնադրում է «Փորձ» հանդեսը, սակայն նյութական միջոցների սղության պատճառով 1881 թ. դադարեցնում է պարբերականի տպագրումը: 1882-1898 թթ. հրատարակում է «Արձագանք» շաբաթաթերթը:

են ունենում Բուսալիայի և Գերմանիայի միավորումները, ինչը կարող է օրինակ ծառայել պետականություն չունեցող մյուս ազգերի համար:

«Փորձում» և «Արձագանքում» իտալական ազգային-ազատագրական շարժումների վերաբերյալ տպագրված նյութերին, մեծամասամբ, բացակայում էին հայ ազգային գործիչների գնահատականները<sup>4</sup>: Դրանք եվրոպական և ռուսական մամուլից թարգմանաբար քաղված հոդվածներից առանձին հատվածներ էին, որոնք պատմաճանաչողական արժեք էին ներկայացնում ու ընդհանուր գաղափար տալիս այդ շարժման մասին:

Համաշխարհային և մասնավորապես իտալական Ռիսորջիմենտոյի պատմության և ազգային-ազատագրական շարժումների վերաբերյալ «Փորձում» և «Արձագանքում» տպագրվել են բազմաթիվ նյութեր, որոնց ընտրությունը պատահական չէր. դրանք համահունչ էին պարբերականների տեսակետներին:

1876 թ. «Փորձ» հանդեսը տպագրում է Լ. Ասինգի «Ջուզեպե Մաձինի» (թարգմ.՝ Ն. Լալայանցի) խորագրով ակնարկը, ուր հեղինակը փառաբանում էր իր սիրած հերոսին՝ ուշադրությունը սևեռելով հատկապես նրա ազգային-ազատագրական գործունեության վրա: Ակնարկը գրվել էր հերոսի մահվան առիթով և ընդգծվում էր նրա դրական արժանիքները: Հեղինակը, ներկայացնելով Ջ. Մաձինիի կյանքը և գործը՝ նրան համարում է առասպելական հերոս ապագա սերնդի համար: Հիշատակվում է, որ «1872 թվի մարտի 10-ին Բուսալիան զրկվեց ամենաազնիվ և ամենամեծ մարդկանցից մինից, որ յուր հանճարի բարձր հատկությունների հետ ուներ և անխոնջ և գործունյա բնավորություն և մարդկության համար այրվող մի սիրտ, որ հսկայական տոկունությամբ յուր ամբողջ կյանքը նվիրեց յուր հայրենիքի վերածնության, առաջադիմության և ազատության սկզբունքներին»<sup>5</sup>: Ջ. Մաձինին դժվարին կյանք է ունեցել, դատապարտվել է բանտարկության, դրանից խույս տալու համար նա գործել էր մե՛րթ Շվեյցարիայում, մե՛րթ Անգլիայում:

Լ. Ասինգը Ջ. Մաձինիին դասում է ժամանակի մեծությունների շարքում՝ Դանթեի, Գալիլեյի, Մաքիավելլիի, Ալֆիերիի, Կոլումբոսի և Բայրոնի կողքին, որոնք երազել են Բուսալիայի ազատությունն ու անկախությունը: Սակայն վերջիններից տարբերվում էր իր գործնականությամբ: Ջ. Մաձինին պայքարի մարդ էր, երբեք չէր հուսահատվում: Կատարվել էր նրա երազանքը դեռ նրա կենդանության օրոք: Նա տեսել էր իր երկրի ազատությունն ու անկախությունը:

Հեղինակը ներկայացնում էր փաստեր Ջ. Մաձինիի պատանեկության շրջանից, որ քչերին էր հայտնի, հիշատակում նրա հավատարիմ ընկերներին, Մաձինիի մասնակցությունը կարբոնարիական շարժմանը, նրա բանտարկությունը: 1831-ին բանտից ազատվելուց հետո, նա հիմնում է «Երիտասարդ

<sup>4</sup> «Արձագանքի» «Մի համակրելի հարյուրամյակ» հոդվածում նշանավոր հայագետ Կարապետ Եզյանը փառաբանում է Բուսալիայի (նաև Գերմանիայի) միավորման գաղափարը, մասնավորապես նշելով, որ Գերմանիայի Վիլհելմ II կայսրը անցել է Բուսալիա, ծաղկեպսակ դրել Վիկտոր-Էմանուելի և Գարիբալդիի շիրիմներին՝ դրանով վավերացնելով «նույն ոգևորող գաղափարները» («Արձագանք», 1888, № 41, էջ 568):

<sup>5</sup> «Փորձ», 1876, № 1, էջ 207:

Իտալիա» կազմակերպությունը: 1833-ից անցնելով ժնև՝ աշխատում է կազմակերպել Մավոյայի ապստամբությունը, որն անհաջող էլք է ունենում: Լ. Ասինգը բացահայտում է նաև Մաձինիի լավատեսությունը և դժվարություններից չհուսահատվելը: Նա 1834-ին հիմնում է համաեվրոպական «Երիտասարդ Եվրոպան», որը «եղբայրական ազգերի մի ընկերություն» էր: 1836-ին Շվեյցարիայից տեղափոխվում է Լոնդոն՝ շարունակելով իր հետագա քաղաքական գործունեությունը:

Հեղինակը հիշատակում է Ջ. Մաձինիի նամակը՝ ուղղված Հռոմի Պիոս Թ - պապին, որում վերջինիս առաջարկել էր միանալ երկրի ազատագրման գործին:

Ջ. Մաձինին դառնում է Հռոմի հանրապետության ղեկավարներից մեկը Արմելինիի, Աուրելիի և Սաֆիի հետ: Մակայն Հռոմի հանրապետությունը երկար չգոյատևեց:

1859–1860-ական թվականներից Մաձինին մասնակցեց իտալական ազգային-ազատագրական շարժմանը, որի շնորհիվ ազատագրվեց երկրի մի մասը: Լ. Ասինգը բարձր է գնահատում նրա դերը երկրի վերածնության գործում և եզրակացնում է, որ «Մաձիննու անձնավորության մեջ Իտալիան կորցրեց յուր ամենահավատարիմ որդկերանցից մինին և ոչ մի մարդու նա այնքան պարտական չէ, յուր վերածնության համար, որքան նորան»:

Եթե եվրոպական մամուլը, որոշ դեպքերում, Ջ. Մաձինիին ներկայացրել է իբրև «ավազակ» և ո՛չ թե հեղափոխական գործիչ, ապա Լ. Ասինգը խիզախել և ձերբազատվել է բոլոր ընդունված կարծիքներից ու սովել Ջուզեպե Մաձինիի օբյեկտիվ գնահատականը՝ նրա բերած նպաստը իտալական ազգային-ազատագրական շարժմանը, որն ընդունելի տեսակետ էր նաև XIX դ. երկրորդ կեսի հայ հասարակական մտքի պատմության համար:

1882 թ. Գենուայում (Ջենովայում) բացվել է Ջ. Մաձինիի արձանը, որի մասին տեղեկացնող հեռագիրը տպագրվել է «Արձագանքում»: Այդ կարևոր միջոցառմանը 2000-ից ավելի մարդ էր մասնակցում, որոնց շարքերում էին իտալական պառլամենտի պատգամավորներ, ուր 700-ից ավելի ռամկապետական ընկերությունների դրոշակներ էին ծածանվում: Արձանի հեղինակն էր իտալացի նշանավոր քանդակագործ Միքել Անջիոլեսկուն: Արձանի բացմանը ներկա էին նախկին եռապետ Սաֆին, որը հանդես էր եկել մի ճառով՝ բացատրելով Մաձինիի վարդապետությունը: Մաձինին «Իտալիային ցանկանում էր գեղեցիկ ապագա և միություն ազատ ազգերի և միջազգային արդարադատություն»<sup>6</sup>: Նա հիշեցրել է ներկաներին հերոսի անցած դժվարին ուղին և այն ծառայությունները, որ կատարել է ազգային միության գաղափարի համար:

Ջուզեպե Մաձինին իր ողջ կյանքի ընթացքում ունեցել է վերելքի ու վայրէջքի շրջաններ: Նրա գործունեությունը շատ դիպուկ է բնութագրել պատմաբան Կ. Է. Կիրովան իր աշխատության մեջ, ուր գրում է. «Այնպես ստացվեց, որ Ջուզեպե Մաձինիի պատմությունը ոչ միայն պատմություն է նրա անձնական հաջողությունների և սխալների, նրա անձնական թռիչքների և անկումների, այլև

<sup>6</sup> «Արձագանք», 1882, №19:

ինչ-որ չափով իտալական ազգի պայքարի պատմություն՝ իր անկախության, միասնության, Բտալիայի Վերածնության համար»<sup>7</sup>:

Ջ. Մաձինին մեծ հայրենասեր էր և իր կատարած հեղափոխական գործով ծառայեց ազգային վեհ նպատակներին:

1879 թ. «Փորձում» տպագրվում են ֆրանսիացի հանճարեղ գրող Ժորժ Մանի (Ջանդի) (1804–1876) շատ հետաքրքրական «Գարիբալդի» խորագրով երկու ակնարկները:

Ժ. Մանը 1834-ին այցելել է Վենետիկի Մխիթարյան միաբանության Ս. Ղազար կղզին, հիացել է Մխիթարյանների կատարած գիտական և մանկավարժական գործունեությամբ: Նա մասնակցել է ֆրանսիական 1848 թ. հունիսյան ապստամբությանը, ինչպես նաև Ջուզեպե Գարիբալդիի «Հազարյակի» արշավանքին և խանդավառվել Բտալիան ազատագրելու ու միավորելու նրա գործով: Ժ. Մանը առաջ էր քաշում հարցեր. ո՞վ էր Գարիբալդին և ի՞նչ առաքելությամբ էր օժտված: Գրողը նկատում է, որ նա աշխարհ գալով նվիրվում է իր ժողովրդի ազատագրական վեհ գործին:

Ժ. Մանը նկարագրում է Բտալիայի գեղեցիկ բնությունը, ուր ծնվում էին գեղեցիկ մարդիկ, ինչպիսին էր «ոյուցազնական» հերոս Ջ. Գարիբալդին՝ իր ժողովրդի սիրելիներից մեկը, որ վաղ հասակից նվիրվել էր ազգային-ազատագրական շարժմանը: Ըստ Ժ. Մանի՝ «Ամբողջ Եվրոպան հետաքրքրվում է նրանով և նրա կատարածով, ... և ամեն առավոտ զարթնում է հարցնելով, թե ո՞ր է նա և ի՞նչ է արել նախընթաց օրը»<sup>8</sup>: Ժ. Մանը հիացած էր Բտալիայի ազգային հերոսի նկարագրով: Մտքով ու սրտով նրա հետ էր: Նա դրվատանքով էր գրում նաև Գարիբալդիի «ազնիվ կերպարանքի» մասին, որն իր «տեղը բռնել է արդեն պատմության մեջ»: Ժ. Մանը նկարագրում էր իր սիրած հերոսի՝ Գարիբալդիի «ոյուցազներգությունը», որը հավերժ կուղեկցի իր ազգակիցներին: Հիացած էր իր սիրելի հերոսի սխրագործություններով, որին հաջողվեց ազատագրել Նեապոլիտանյան թագավորությունը՝ գրավելով Սիցիլիան:

Հեղինակը փառաբանում էր իտալական Ռիսորջիմենտոյի մյուս նշանավոր գործիչներին. «Եթե Վիկտոր-Էմանուելը և Գարիբալդին Բտալիայի բազուկն ու սուրն են, Կավուրը այն վահանն է, առանց որի այդ քաջերը դարանակալների նետերից անվնաս չէին մնալ»<sup>9</sup>: Մակայն հավասարության նշան էր դրվում մի կողմից Վիկտոր-Էմանուելի ու Կավուրի, մյուս կողմից էլ Գարիբալդու գործունեության միջև: Այս հարցում Ժ. Մանն իրավացի չէր, քանի որ նրանք քաղաքական տարբեր ուղղությունների էին պատկանում: Ճշմարտացի է ամերիկուների պատմաբան Մարցիա Դավենպորտը, երբ Գարիբալդիի և կոմս Կավուրի հարաբերության մասին գրում է. «Այս երկու մեծ մարդիկ, երբեք իսկապես չհասկացան ու չսիրեցին իրար: Կավուրը չէր կարողանում գնահատել Գարիբալդիի անանձնական հայրենասիրությունը: Իսկ Գարիբալդին չէր կարողանում հասկանալ եվրոպական դիվանագիտության այն լայնածավալ սարդոս-

<sup>7</sup> К. Э. К и р о в а. Жизнь Джузеппе Мадзини. М., 1981, с. 175.

<sup>8</sup> «Փորձ», 1879, № 5, էջ 152:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 155:

տայնր, որի միջոցով Կավուրը զարմանալի խելոքությամբ պետք է հյուսեր իր զգուշավոր ճանապարհը»<sup>10</sup>:

Մ. Սանը գեղարվեստորեն է նկարագրում իր հերոսին ու Գարիբալդիի հերոսության օրինակը ծառայեցնում էր դաստիարակելու երիտասարդությանը: Մ. Սանը եզրահանգում էր, որ Գարիբալդին, իր ժողովրդի ազատագրական պայքարի առաքյալը լինելով, նրան առաջնորդում էր դեպի լուսավոր ապագա, որի ականատեսն անձամբ ինքը եղավ:

«Արձագանք» շարթաթերթում տպագրված հոդվածները հիմնականում վերաբերում էին Իտալիայի ազգային հերոս Ջ. Գարիբալդիի մահվան տարեդարձին:

«Արձագանքը» թեև նկարագրում է իտալացի մեծերի գործերը, այնուամենայնիվ, պարբերականի համար որպես իդեալ մնում է Ջ. Գարիբալդիի լուսավոր կերպարը:

1882 թ. «Արձագանքի» Արտաքին տեսությունն բաժնում տպագրվում է Կադենի «Գարիբալդին Նեպոլում» գրվածքից մի հատված, ուր գրում էր «Ժամանակակից դյուցազնի» մասին: Հեղինակի վրա անջնջելի հետք էր թողել Ջ. Գարիբալդիի թաղման արարողությունը և այդ տպավորության տակ էլ գրվել է հոդվածը: Կադենը, իմաստավորելով Գարիբալդիի անցած ուղին, գրում էր. «Այո՛, Ջուզեպե Գարիբալդին մի դյուցազն էր, մի այնպիսի դյուցազն, որի հավասարը երբևիցե ծնել է նախնի Հունաստանը կամ Հռոմը: Մեզ հայտնի են Հոմերոսի, Պլուտարքոսի դյուցազները, Գարիբալդին նոցա օրինակն է»<sup>11</sup>: Շեշտում է նրա մարդկային բոլոր առաքինությունները, հիշում է նորից Ջ. Գարիբալդիի «Հազարյակի» արշավանքը. նա մարդ էր և մահկանացու: Հեղինակը տխուր է, քանի որ հերոսն այլևս չկա: Ժամանակի լրագիրներն էլ, փոխանակ Ջ. Գարիբալդիի ճակատամարտերի և հերոսությունների մասին գրելու, լռում են:

«Արձագանք» շարթաթերթի մյուս նյութը թարգմանաբար տպագրվել է ռուսական «Толос» պարբերականից՝ «Գարիբալդիին մատուցած ամենամեծ հարգանքը» վերնագրով: «Արձագանքը», համամիտ լինելով ռուսական պարբերականի հետ, գրում էր. «Իհարկե, Գարիբալդին Իտալիայի քաղաքական իդեալի ամենաբարձր արտահայտությունն է համարվում»<sup>12</sup>: Նույն պարբերականի հաջորդ հոդվածում «Գարիբալդին Կապիտոլիումը» (հոդվածն անստորագիր էր), ուր հեղինակը ցույց էր տալիս, թե ինչպես են իտալացիները մեծարում «ավանդական հերոսին»: Հռոմում ազգային հանդես են արել նրա պատվին, որին մասնակցել են ինչպես իշխանավորներ, նույնպես էլ «Հազարյակի» արշավանքի կենդանի մնացած գարիբալդիականներ: Հեղինակը նշում էր, որ այդ հանդեսի ժամանակ «Գարիբալդյանները վայր բերեցին կառքից կիսար-

<sup>10</sup> Garibaldi Father of Modern Italy. By Marcia Davenport. New York, 1975, p. 171.

<sup>11</sup> «Արձագանք», 1882, № 1, էջ 11:

<sup>12</sup> «Արձագանք», 1882, № 7, էջ 106:

ձանը (Գարիբալդիի. – Ն. Ա.) և տարան Կապիտոլիայի վերը»<sup>13</sup>: Եվ հանդիսավոր կերպով արձանի պահպանությունը հանձնեցին Պարբոնիի դքսին:

1896 թ. «Արձագանքը» մի ուրիշ համարում (№ 68) վերստին անդրադառնում է Ջ. Գարիբալդիի մահվան 14-րդ տարեդարձին, որը մեծ շուքով նշում են Իտալիայում: Այս առիթով ցույցին մասնակցում էր «երիտասարդության սիրելին»՝ պրոֆեսոր Բովիոն, որն իր արտասանած ճառում ներկայացնում է նրա ժողովրդականությունը, որն իր մեջ խտացրել էր դարի ոգին: Իրավացի էր վաստակաշատ գիտնական Մ. Միսիթարյանը, երբ այս առիթով գրում էր, որ «Ջովաննի Բովիոյի ճառը, որի բնութագրումներն անկասկած ներդաշնակում էին թերթի համակրանքներին: Համադրելով Նապոլեոնին և Գարիբալդիին, հռետորն ասում է. մեկը ներկայացնում էր պատերազմ, մյուսը՝ մրցում, մեկը՝ աշխարհակալություն, մյուսը՝ ազատություն: Նրան չպետք է փնտրել մեծ գորավարների և ծովակալների շարքում»<sup>14</sup>:

1877/1878 թթ. «Փորձի» № 3-ում, Քաղաքական տեսություն բաժնում, տպագրվում է «Վիկտոր-Էմանուել Բ, Միացյալ Իտալիայի առաջին թագավորը» վերնագրով նյութը, ուր իր ընթերցողներին հայտնում էր, որ «57 տարեկան հասակում» վախճանվել է միացյալ Իտալիայի առաջին թագավոր՝ Վիկտոր-Էմանուել Երկրորդը»<sup>15</sup>: Նա իր ողջ գիտակցական կյանքը նվիրել էր իր ժողովրդին՝ «ազգային միության գաղափարներին»: Այդ գործում պարբերականը չէր անտեսում «հանձարավոր Կավուրին» և «անվեհեր Գարիբալդիի սուրը»: Պարբերականը նշում էր նաև, որ 1859–1860-ական թվականներին իտալական ազգային-ազատագրական շարժման ընթացքում, երկրի կենսունակ բոլոր ուժերը համախմբվեցին Վիկտոր-Էմանուելի շուրջը: Հանդեսն ընդգծում էր նաև Վիկտոր-Էմանուելի ճարտարությունն ու ժողովրդականությունը: Հիշում է նաև Վիկտոր-Էմանուելի մղած կռիվները Պաստրենգոյի (1848 թ. մայիս) և Կուստոցայի (1848 թ. հուլիսի 25–26-ին) ճակատամարտերում, որտեղ վերջինս՝ «հասարակ զինվորի պես կռվում էր»: Եվ դրանով բարձրացավ նրա ժողովրդականությունը: Վիկտոր-Էմանուելը Իտալիայի ազատագրման բոլոր դրվագներում գործեց հերոսաբար: Լոմբարդիան և Վենետիկն ազատագրեց Ավստրիայից, Տոսկանան, Մոդենը, Պարմը՝ դքսերից, Նեապոլիտանյան թագավորությունը՝ Ֆրանչեսկո II-ից, իսկ Հռոմը՝ պապից: Նրա մահը սգում են Իտալիայի քաղաքները՝ Հռոմը, Թուրինը, Միլանը և այլն: «Փորձի» հոդվածագիրն ավարտելով նյութը՝ համարում է, որ Վիկտոր-Էմանուելն ավարտին հասցրեց Իտալիայի միավորման գործը: Հանդեսն անդրադառնում է նաև և իտալացի ժողովրդի կատարած սխրագործություններին և ցանկանում նման ուժեղ անհատներ տեսնել նաև XIX դ. երկրորդ կեսի Հայաստանում, որը կնպաստեր արևմտահայ ու արևելահայ հատվածների, ինչպես և երկրի միավորմանը:

<sup>13</sup> «Արձագանք», 1882, № 18, էջ 281:

<sup>14</sup> Մ. Մ ի թ ա ռ յ ա ն. 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից («Փորձ», «Արձագանք»), Երևան, 1976, էջ 419:

<sup>15</sup> ×Փորձ ×, 1877/1878, № 3, էջ 363:

«Փորձին» հետաքրքրել էր նաև Մոնիեի «Բանդիերա եղբայրները» հրապարակումը, որը նվիրված էր Իտալիան ավստրիական լծից ազատագրելու գործին: Չնայած երկու եղբայրները՝ Ատիլիո և Էմիլիո Բանդիերաները, ծնվել էին Վենետիկում, զինվորական գործիչներ էին, իսկ նրանց հայրը ծառայում էր ավստրիական բանակում և գեներալի աստիճանի էր արժանացել, բայց նայնպես հայրենիքն ազատագրելու համար խիզախեցին: Նրանց ռոմանտիկ ձգտումները, ընդամենը 21 հոգով ազատագրել Կալաբրիան, հավանության չարժանացան, ոչ «Երիտասարդ Իտալիայի» ղեկավար Ջուզեպե Մաձինիի, և ոչ էլ նրանց կողմնակից, բավականին մեծ փորձ ունեցող ռազմական գործիչ Նիկոլո Ֆաբրիչինիի ու մյուսների կողմից:

Հոդվածում քննվում է այն հարցը, որ Բանդիերա եղբայրները նամակ են գրում Ջուզեպե Մաձինիին և խնդրում իրենց ընդունել «Երիտասարդ Իտալիա» կազմակերպության մեջ: Երկու եղբայրները Ջոյուտնիայից «Լլոյո» շոգենավով հասել էին Կորֆու և հիմնել «Էկզերիա» անունով դավադրական խումբը: Անգլիական ոստիկանությունը գաղտնի հետևում էր Բանդիերա եղբայրներին և Նիկոլո Ֆաբրիչինիի ու Ջուզեպե Մաձինիի նամակագրությանը: Ոստիկանությունը յոթ ամիս անց երկու եղբայրների գործունեության վրա հսկողություն սահմանեց:

Որն էր Բանդիերա եղբայրների արշավանքի գլխավոր նպատակը: Նրանք ուզում էին ազատագրել Կալաբրիան, իսկ հետո նաև ողջ Իտալիան: Նրանց նավով սպասում էր Նեապոլիտանցի Կապուտո անունով հրամանատարը: Նրանք տեղ հասան 1844 թ. հունիսի 25-ին: Խմբի անդամները ասի իջան, նրանցից մի քանիսը և Բանդիերա եղբայրները, ինչպես նկարագրված է ակնարկում, ծունկի իջան և համբուրեցին հարազատ հողը, բացականչելով՝ «Դու պարզևեցիր մեզ կյանք, մենք էլ նորան քեզ ենք գոհ բերում»<sup>16</sup>: Կալաբրիա հասնելուն պես նրանց հույսերը ի չիք են դառնում: Այնտեղ նրանք ոչ մի ապստամբի չեն հանդիպում: Հոդվածում հիշատակվում են խմբի անդամները, որոնք նվիրվել էին հայրենիքի ազատագրման գործին: Այդ գործի նվիրյալներից էին Մոդենայի դիկտատորի որդին՝ փաստաբան Անարխարսիս Նարդին, բոլոնիացի քանդակագործ Պաչիոն և վենետիկցի մատենագիր Մանեսը, և ուրիշներ:

Պահապան գործին հրամայվել էր դիմավորել ապստամբներին: Ի վերջո, նրանք հայտնվում են ծուղակում Սան Ջիովանիի մոտ և ձերբակալվում: Հեղինակը նկարագրում է այն փաստերը, որի արդյունքում «կռիվը տասը րոպեից ավելի չտևեց»: Հայրենասերներին բանտարկում են Կոզենցի բանտում, որտեղ նրանք համարվում էին «քաղաքի հերոսներ»<sup>17</sup>:

Հոդվածի հաջորդ գլուխներում քննարկվում էր քաղաքական կուսակցությունների դերը Իտալիայի միավորման գործում: Հիշատակվում են 1820–1821 թթ. կարբոնարիական կազմակերպությունները, Ջ. Մաձինիի գլխավորությամբ գործող «Երիտասարդ Իտալիան»: Այդ կազմակերպությունները համե-

<sup>16</sup> «Փորձ», 1877/1878, №1, էջ 182:

<sup>17</sup> Նույն տեղում:



մատվում են ֆրանսիական Լեգիտիմիստների, Բուրբոնների, Օռլեանականների և ուրիշների հետ. առաջնությունը տրվում է ֆրանսիականներին: Մատենագիր Լատարիի խոսքերը մեջբերելով՝ հեղինակը նկատում է, որ Կալաբրիա արշավելու փորձն անիմաստ էր և մարդկային զոհերի պատճառ դարձավ:

«Դատավճիռը» բաժնում նկարագրվում է այդ օրերին հայրենասերների ծանր վիճակը. իրենց այցի եկած քահանայից մեղքերի թողություն էին խնդրում: Հերոսներն ընկան 1844 թ., և նրանց շուրթերից լսվեց «Կեցցե՛ Բուսալիան» արտահայտությունը: Չորսին՝ Ռիչիոտտիին, Լուպատելիին, Վեներուչիին և Ատիլիոյին գնդակահարեցին: Սկզբում թաղեցին Նեապոլի մայր եկեղեցում, իսկ ավելի վեհաշուք ձևով 1859–1860-ական թվականների ազատագրական շարժումից հետո, վերաթաղեցին: Այս հայրենասիրական գործն անհետևանք չմնաց, այն անցավ պատմության գիրկը և հիմք հանդիսացավ 1848–1849 թթ. իտալական ազատագրական շարժման համար, որտեղ այլևս չկրկնվեցին նման սխալները: «Բանդիերա եղբայրները» հողվածում հանդիպում են իտալացի հայրենասերների գործողությունների մանրամասներ, որոնց մասին չեն գրվել պատմագիտական լուրջ ուսումնասիրություններում:

Հողվածում հիշատակված դեպքերն իրական են՝ նկարագրված ռոմանտիկ ներշնչանքով և ընթերցվում են մեծ հուզականությամբ:

Բուսալական ազգային-ազատագրական շարժմանը վերաբերող նյութերը հայության համար ունեին դաստիարակչական և ուսուցողական նշանակություն, քանի որ դրանցում արծարծվող հարցերը հրատապ էին ժամանակի հայ իրականության համար:

«Փորձ» հանդեսի խմբագրությունը 1881 թ. -1-ում տպագրում է Դանեի Գուստավի «Կայրոյան գերդաստան» վերնագրով գրքույկի վերլուծականի հայերեն թարգմանությունը, որը, իհարկե, կհետաքրքրեր նաև հայ ընթերցողներին: Հեղինակը նշում էր, թե գրքույկը անանուն գործ էր և տպագրվել էր «Die Gegenwart» անսագրում:

Այստեղ տրված է Կայրոյան գերդաստանի տոհմաբանությունը: Տոհմ, որը երկրին տվել է Կայրոյի գերդաստանի հինգ անվանի զավակներ՝ Բենեդետտո, Էրնեստո, Լուիջի, Էնրիկո և Ջիովանի, որոնք արյուն են թափել երկրի ազատագրման ու միավորման համար: Ընտանիքի հայրը՝ Կարլո Կայրոյին մեծ ազգասեր էր, մասնագիտությամբ բժիշկ, ծնվել և գործում էր Պավիայում: Բուսալական ազգային-ազատագրական շարժումից դեռևս շատ առաջ իր որդեգրած գաղափարների համար «կասկածելի» անձնավորություն էր համարվում ավստրիացիների շրջանում: Նրանց մայրը՝ Ադելաիդա Բոնոն, ևս հայրենասեր կին էր, ինչն իր ազդեցությունն էր ունեցել որդիների դաստիարակության գործում: Ըստ գրքույկի հեղինակի, «Գարիբալդու գերդաստանից զատ հազիվ թե մի այլ գերդաստան գտնվի Բուսալայում, որ ավելի եռանդալից մասնակցություն ունեցած լինի իտալական ժողովրդյան կյանքի համար այնքան արդյունավոր շարժման, որքան ունեցավ Կայրոյան գերդաստանը, որի ներկա գլուխը վերջերումս երկրորդ անգամ կոչվեցավ յուր հայրենիքի առաջին նա-

խարարության պաշտոնին»<sup>18</sup>: Կայրոյիների գերդաստանը նմանվում էր Գարիբալդիի ընտանիքին, քանզի վերջինս ծառայում էր հասարակական շահերին: Կայրոյիները ևս գործում էին իրենց ժողովրդի շահերի համար:

Բենեդետտո Կայրոյին՝ իտալական ազգային շարժումների ժամանակ աչքի ընկնող գործիչ էր: «Փորձի» վերլուծականում նկատվում է, որ, իրոք, վերջերս հրատարակած գրքույկը շատ հետաքրքրական է, քանի որ Կայրոյիներին ծանոթ չեն մյուս ազգերը, ուր տոհմի մասին պարզ և ճշմարտացի իրողություններ է պատմվում: Տոհմակիցներից առանձնանում էր գլխավոր գործող անձը՝ Բ. Կայրոյին: Դ. Գուստավը նաև նկատում է, որ գրքույկում Բ. Կայրոյին ներկայանում է ոչ թե որպես քաղաքագետ, «այլ իբրև գարիբալդիական, իբրև հայրենիքի զինվոր»<sup>19</sup>: Վերջինս, իրոք, հայրենիքին նվիրյալ զինվոր էր և առաջին անգամ աչքի էր ընկել 1846-ին, երբ Պալերմոյում ավստրիացի սպան ծիազրանակը զցել էր գետնին և այդ առիթով ուսանողների ու ավստրիական զորքերի միջև իսկական կռիվ էր ծագել: Կովող ուսանողների շարքում էր գտնվում Բենեդետտոն, որին հազիվ հաջողվել էր խույս տալ ավստրիական բանտ նստելուց: Նրա հաջորդ ընդհարումը ավստրիացիների հետ 1848-ին էր, երբ Կարլոս Ալբերտը, որը Սարդինիայի թագավորն էր, պատերազմ հայտարարեց Ավստրիային: Երիտասարդ Բ. Կայրոյին այդ ժամանակ հերոսաբար կռվեց և ստացավ կապիտանի աստիճան: Նրանց ընտանիքը դրանից հետո վերադարձավ Պավիա՝ հաստատվելով Պիեմոնտի Գրոպելլո փոքրիկ քաղաքում: Բենեդետտոյի հայրը՝ Կարլո Կայրոյին մահացավ Նավարայի ճակատամարտից հետո (1849 թ. մարտի 23-ին):

1848–1859 թթ. Կայրոյան գերդաստանի ավագ որդիները՝ Բենեդետտոն և Էրնեստոն ակտիվ մասնակցություն ունեցան Ջ. Մաձինիի կազմակերպած ազատագրական շարժմանը: Եղբայրները հատկապես հոգ էին տանում Պավիայի և Ջենովայի «մասնաժողովների հարաբերությունները» ամուր պահելու համար: Այդ ընթացքում իր քաղաքական համոզմունքների համար Էրնեստոն 14 օրով բանտարկվեց:

Երբ կառավարության պահանջով 1859 թ. Ջ. Գարիբալդին կազմավորում էր Ալպյան գնդերը, Բենեդետտո և Էրնեստո եղբայրները առաջինը մտան նրա կազմավորների շարքերը, իբրև հասարակ զինվորներ՝ հաշվի չառնելով, որ ունեին զինվորական կոչումներ: Մյուս եղբայրները՝ Լուիջին, Էնրիկոն և Ջիովանին հետևեցին ավագների օրինակին. Լուիջին՝ Տորկոյի զինվորական դպրոցում կրթություն էր ստանում, Էնրիկոն՝ աշխատում էր Լոմբարդիայում, իսկ Ջիովանին մտավ Թուրինի «ռաբաձիգ գորաց դպրոցը»:

Կռիվների ավարտից հետո, երբ տեղի ունեցավ Բոսալիայի համար անսպասելի Վիլաֆրանկյան հաշտությունը (11 հուլիսի 1859 թ.), նորից երեք կրտսեր եղբայրները խաղաղ աշխատանքի անցան:

1860 թ., երբ սկսվեց Ջ. Գարիբալդիի Միցիլիական արշավանքը՝ Նեապոլի թագավորությունն ազատագրելու համար, Բենեդետտո Կայրոյին և նրա 170 կա-

<sup>18</sup> × Փորձ ×, 1881, № 1, էջ 93:

<sup>19</sup> Նույն տեղում:

մավորները Պավիայից «եկան Քուարտո», միացան ազատագրական շարժման մասնակիցներին ու պայքարեցին հայրենիքի ազատագրության համար: Ջ. Գարիբալդիի «Հազարյակն» ուներ ընդամենը 4 թնդանոթ և 2 շոգենավ, որով շարժվեցին Միցիլիան ազատագրելու: Պավիացիները հերոսաբար կռվեցին, սակայն և՛ Էնրիկոն, և՛ Բենեդետտոն այնտեղ վիրավորվեցին: Ջ. Գարիբալդին, ոգևորված պավիացիների խիզախությամբ, այդ կովի մասին հպարտորեն ասում էր. «Այս մի բուռը հերոսներով, կը վստահանամ մինչև աշխարհի ծայրը գնալ»<sup>20</sup>: Լուիջին նույնպես կռվեց հերոսաբար «Ջիրտորիի գորաբաժնում»: Չնայած վերջինս գերծ մնաց հրացանների գնդակներից, սակայն զոհ գնաց Կայարրիայի «կիզող արևին»: Ազատագրական կռիվները դեռ շարունակվում էին: Պիեմոնտացիները գրավեցին Գայետան և միացրին Իտալական թագավորությանը:

«Հոռ մ կամ մա՛հ» 1862-ի Գարիբալդիի արշավանքի ժամանակ վերջինիս ուղեկցողն ու համհարզն էր մի գեղեցիկ, բարետես արտաքինով երիտասարդ՝ Կայրոյան գերդաստանից՝ Էնրիկոն: Ասպրոմոնտեի ճակատամարտի ժամանակ Բենեդետտոն գնդապետի աստիճանի արժանացավ, իսկ Էնրիկոն՝ հազարապետի: Ջիովանին նույնպես նրանց խմբի հետ էր: Իր 70 կամավորներով Կանտալուպոյից շարժվեց Մենտանա: Ինչպես նկատել է Դանեիլ Գուստավը այս ճակատամարտը «դյուցազներգություն է» հիշեցնում: Հոկտեմբերի 22-ին խումբը մոտեցավ Հոռմի սահմանին: Հեռվից երևաց Ս. Պետրոսի եկեղեցու ոսկեգօծ գմբեթը: Առավոտյան ժամը 4-5-ին պայպի զորաբաժնից մի զորագունդ է գալիս Վիլլա Գլորի, որի դեմ կռվում էին Էնրիկոն և Ջիովանի Կայրոյիները: Էնրիկոն մեռավ «Կեցցե՛ Հոռմը, կեցցե՛ Գարիբալդին» գոչելով, իսկ Ջիովանին՝ Հոռմի պայպի զինվորներից վիրավոր, տեղափոխեցին Գրոպելլո, որտեղ և 8 ամիս անց՝ 1869 թ. սեպտեմբերի 11-ին, 26 տարեկանում մահացավ:

Նրանց մայրը՝ Ադելաիդան, մահացավ 1871 թ. մարտի 17-ին, երբ ազատագրվել էր Հոռմը: 1875 թ. մի բարեգործական հաստատություն արձան կանգնեցրեց՝ «սպարտական մոր» հիշատակին: Որդիներից կենդանի էր մնացել ավագը՝ Բենեդետտոն, որը հուզումնալից մի ճառ արտասանեց արձանի բացման առիթով: Նա նկատեց. «Գորովալիր սեր դեպի վախճանվածները, մեր հույսը հայրենյաց վրա, պարտականությունը մեզ համար»<sup>21</sup>: 1876-1887 թթ. Բենեդետտոն Կայրոյին պաշտոնավարեց որպես Իտալիայի վարչապետ՝ երկու ժամկետով: «Բենեդետտոն իր հայրենիքի Իտալիայի միության և գորության համար ոչինչ զոհաբերություն չէր խնայել»<sup>22</sup>: Ջ. Գարիբալդին իրենց կատարած սխրագործությունների համար բարձր էր գնահատում Բ. Կայրոյի և նրա ընտանիքի դերը<sup>23</sup>: Ահա այդպիսի վախճան ունեցավ իտալական ազգային քաջակորով Կայրոյիների գերդաստանը, որը, իրոք, անկրկնելի ներդրում ունի իտալական ազատագրական շարժման գործում:

<sup>20</sup> Նույն տեղում:

<sup>21</sup> Նույն տեղում:

<sup>22</sup> Նույն տեղում:

<sup>23</sup> *St e u Д ж. Г а р и б а л ь д и. Мемуары. М., 1966, с. 227:*

«Արձագանքը» 1885 թ. երկու համարում (№ 6–7) տպագրել է «Մի հիշատակ Գարիբալդիի կյանքից» հոդվածաշարը (գերմաներենից թարգմանել է Ե. Լալայանը), ուր ներկայացրել է Կոստանդնուպոլսի պրուսական դեսպանի [հավանաբար ֆելդմարշալ Հելմուտ ֆոն Մոլտկեն (1800–1891 թթ.)] հուշերը Գարիբալդիի մասին:

1870–1871 թթ. ֆրանս-պրուսական պատերազմի նախօրյակին իտալացի շատ գաղթականներ էին հաստատվել Կոստանդնուպոլսում, որոնց մեջ էր գտնվում նաև իտալական պառլամենտի անդամ, հայ ժողովրդի մեծ բարեկամ, հերոս Ամիլյարե Չիպրիանին: Պրուսական կառավարության կողմից մշակվել էր մի ծրագիր, ըստ որի պատերազմը սկսվելիս Պրուսիային իր 10 հազարանոց բանակով օգնության պետք է գար Ջ. Գարիբալդին: Պրուսական դեսպանը Կոստանդնուպոլսում հանդիպում է Ամիլյարե Չիպրիանիի հետ, որը նրան խորհուրդ է տալիս տեսակցել Գարիբալդիին ապառաժուտ Կապրերայում և ստանալ վերջինիս համաձայնությունը: Դեսպանը Կոստանդնուպոլսից մեկնում է Մազալենա, այնտեղից ուղևորվում է Կապրերա կղզին, որտեղ հանդիպում է իտալացի մեծ հերոսին և ստանում նրա համաձայնությունը: Դեսպանը նկարագրում է Կապրերա կղզին, Գարիբալդու տնակը, հերոսի արտաքին վառ նկարագիրը և այն տպավորությունը, որ ստացել էր հանդիպումից: Դեսպանը գնահատում է իտալացի հերոսին որպես «... մեր դարի մեծ մարդկանցից մի-նր»: Մակայն առաջարկված ծրագիրը չիրագործվեց:

Պրուսիան պատերազմում հաղթեց Ֆրանսիային, և նրա գլխավորությամբ Գերմանիան միավորվեց:

1870 թ. սեպտեմբերի 4-ին Ֆրանսիան հռչակվեց հանրապետություն: Իսկ Ջ. Գարիբալդին հանրապետական գաղափարներով ոգևորված իր Մենտոի և Ռիչիոտի որդիներով կռվեց Ֆրանսիայի կողմից Վոգեզյան բանակի կազմում ու հաղթանակներ տարավ պրուսացիների դեմ:

Պատմության մեջ դա մնաց Ջուզեպե Գարիբալդիի վերաբերյալ դեսպանի հետաքրքրաշարժ հուշերից մեկը:

Դեռևս 1867 թ. «Հայկական աշխարհ» պարբերականում տպագրվել է ռուս նշանավոր հեղափոխական դեմոկրատ Նիկոլայ Դոբրոլյուբովի «Հայր Ալեքսանդր Գավազին և նորա քարոզները» հրապարակախոսությունը (Փիլիպոս Վարդանյանի թարգմանությամբ, մեկնաբանություններով և ծանոթագրություններով)<sup>24</sup>, որտեղից երևում է հեղինակի համակրանքը իտալական ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ: Ի դեպ, նշենք, որ իտալական հեղափոխության օրերին այնտեղ էր գտնվում Ն. Դոբրոլյուբովը (բուժման նպատակով) և Ջուզեպե Գարիբալդիի զինակից հայր Ա. Գավազին: Այն մեկ անգամ ևս հայ ընթերցողին ծանոթացնում էր ռուս հեղափոխական դեմոկրատի մտորումներին ավստրիացիների դեմ իտալական ժողովրդի մղած պայքարի, Գարիբալդիի բանակում կռվող հայր Գավազիի (1809–1889) վարդապետությանն ու նրա հեղափոխական գործունեությանը: Գավազիի ճանաչումը առաջ էին քաշվում մի շարք հրատապ խնդիրներ, ազգային միաբանություն և

<sup>24</sup> «Հայկական աշխարհ», Թիֆլիս, 1867, №№ 4–5, էջ 149–166, №№ 6–7–8, էջ 248–262:

ազատության գաղափարներ, Բտալիայի ազատագրում ու միավորում և այլն, ինչը նույն ժամանակաշրջանում հուզում էին նաև հայ ժողովրդին: Պատահական չէ, որ Ն. Դոբրոլյուբովի այդ նյութը գրավել էր նաև Փ. Վարդանյանի ուշադրությունը, և նա ցանկացել էր դա ներկայացնել հայ ընթերցողներին: «Արձագանքը» կարծես թե շարունակում էր «Հայկական աշխարհում» տպագրված նյութի համալրումը՝ հաղորդելով, որ «Հռոմում վախճանվեց ութսուն տարեկան հասակում հայր Ա. Գավազին, այն ազատամիտ վարդապետներից վերջինը, որոնք նշանավոր դեր խաղացին իտալական ժողովրդի անկախության համար կատարված կռվի մեջ»<sup>25</sup>: Այնուհետև պարբերականը ծանոթացնում է Ա. Գավազիի կենսագրականին, հիշատակում է նաև, որ իր ողջ գիտակցական կյանքը նվիրել է հայրենիքին: Մտանձնել է Գարիբալդիի բանակում կռվող զինվորական քահանայի պաշտոնը՝ Ջենովայից անցնում է Բոլոնիա, կռվում է ֆրանսիացիների դեմ, հետո բռնել է արսորի ճանապարհը: Գարիբալդիի հետ նա մասնակից է դարձել Միցիլիայի ազատագրման համար մղված հերոսական մարտերին: Հռոմի պապը Ա. Գավազուն ազատամիտ գաղափարների համար «նզովում է և զրկում է եկեղեցուց»: Կյանքի վերջում, ինչպես տեղեկացնում է «Արձագանքը», նա ապրում էր Հռոմում՝ Ավետարանական համայնքի մի քահանայի ընտանիքում. «Գավազիի վերջին ցանկության համաձայն նորա մարմինը այրվեցավ»<sup>26</sup>:

«Արձագանքը» գրում է նաև Գարիբալդիի կամավորներից (Միցիլիական արշավանքի մասնակից) գեներալ Տյուրին տված խնջույքի մասին, որտեղ մեծարել են ռազմական գործչին<sup>27</sup>:

Բտալական ազգային-ազատագրական շարժումներն իրենց արտացոլումն են գտել «Փորձ» պարբերականի գեղարվեստական գրականության բաժնում: Պոլ դը Մյուսեի «Դոն ֆա-Տուտո» վիպակը (թարգմ. Մ. Ամերիկյան) տպագրվել է 1877-1878 թթ., № 3, էջ 3-87՝ հավելվածում: Այս վիպակի հիմնական թեման է՝ ուր էլ որ լինես, նվիրվիր հայրենիքի ազատագրման գործին:

«Փորձ» հանդեսի մի քանի համարներում (հավելվածում) տպագրվում է Ռիսորջիմենտոյի ժամանակաշրջանի նշանավոր քաղաքական գործիչ և գրող Մասիմո դ'Աձելիոյի (1798-1886) «Հեկտոր Ֆիերամոսկա կամ Բարլետայի մարտակոչը» վեպը (1880 թ., № 6-7, էջ 9-52, № 8-9, էջ 3-44, № 10, էջ 3-36, № 11-12, էջ 3-52, 1881 թ., № 3, էջ 3-31, № 5-6, էջ 3-26): Հեղինակը մասնակցել է ավստրիական տիրապետության դեմ իտալացիների մղած ազատագրական կռիվներին: Վեպի թարգմանիչը (հավանաբար, Գևորգ Բարխուդարյանն է) ընտրել է XVI դ. հերոսական պատմությունը, առաջաբանում նկատում էր իտալացիների և հայերի ճակատագրերի ընդհանրությունները:

Արդ, իտալական ազգային-ազատագրական շարժման վերաբերյալ նյութերի տպագրումը Ա. Հովհաննիսյանի կողմից «Փորձ» և «Արձագանք» պարբերականներում վկայում էր, որ Բտալիայի պատմության հերոսական

<sup>25</sup> «Արձագանք», 1889, № 4, էջ 64:

<sup>26</sup> Նույն տեղում:

<sup>27</sup> Տե՛ս նույն տեղում, 1894, № 22, էջ 4:

*օրինակը բերելով՝ ոգևորում էր հայ ժողովրդին՝ սովորելու եվրոպացիներից և մասնավորապես իտալացիներից:*

ОТРАЖЕНИЕ ИТАЛЬЯНСКОГО НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОГО  
ДВИЖЕНИЯ В ПЕРИОДИЧЕСКИХ ИЗДАНИЯХ “ПОРДЗ” И “АРДЗАГАНК”

*ГРАЧЬЯ АСМАРЯН*

Р е з ю м е

Выходившие в Тифлисе издания “Пордз”(1876–1881) и “Ардзаганк” (1882–1898), главным редактором которых был Аб. Иоаннисян, реагировали на вопросы истории итальянского Рисорджименто (Возрождения), и в частности итальянского национально-освободительного движения. В этих изданиях напечатаны многочисленные переведенные из европейской и русской прессы статьи, касающиеся Джузеппе Мадзини, Джузеппе Гарибальди, короля Виктора-Эммануила, братьев Бандьера, семьи Бенедетто Кайроли и др. Идеалом периодической печати оставался светлый образ Джузеппе Гарибальди.

THE REFLECTION OF ITALIAN NATIONAL - LIBERATION MOVEMENT IN “PORDZ”  
AND “ARDZAGANK” PERIODICALS

*HRACHYA ASMARYAN*

S u m m a r y

“Pordz” (1876-1881) and “Ardzagank” (1882-1898) periodicals, published in Tiflis (editor-in-chief Abgar Hovhannisyan) responded to the issues on world history and particularly on Italian national-liberation movement and published various materials about it, which concern Gouzepppe Madzini, Gouzepppe Garibaldi, Victor Emmanuel II, Brothers Bandera, the Family of Benedetto Kairoli, etc. The articles were being taken and translated from European and Russian Media and suited the requirements of that time. The ideal for the periodicals was still remaining the bright image of Gouzepppe Garibaldi.